Արձանագրություն N 3

«ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԱՊՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի համակարգչային տեխնիկա

«15» նոյեմբեր 2019թ.

ք. Կապան

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝	Արթուր Կոստանդյան
հանձնաժողովի անդամներ՝	Իվան Խաչատրյան
	Գրիգորի Սահակյան
	Զարուհի Հարությունյան
	Հերմինե Մովսիսյան
հանձնաժողովի քարտուղար՝	Ժաննա Մղումյան

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին

1. Ընդունել ի գիտություն.
Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի **«Այ-Թի Թրեյնինգ» ՍՊԸ**-ն և **«Նորմա-պլյուս»** ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություն չունեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0 :

2. **Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԱՊՁԲ-19/6»** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Նորմա պլյուս» ՍՊԸ	Բավարար
«Այ-Թի-Թրեյդինգ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0 :

3. **«ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԱՊՁԲ-19/9» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին**

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ **«ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԱՊՁԲ-19/9»** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ են հայտարարվում **«Նորմա պլյուս» ՍՊԸ-ն և «Այ-Թի-Թրեյդինգ» ՍՊԸ-ն:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0 :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1.Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝

- *Թիվ 1 և 2 չափաբաժինների համար՝* **«Այ-Թի-Թրեյդինգ» ՍՊԸ ին:**
- *Թիվ 8 չափաբաժնի համար՝* **«Նորմա պլյուս» ՍՊԸ ին:**

4.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0 :

5 Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

5.1. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան, Բաղաբերդի 28, «ՀԱՊՀ» Կապանի մ/ճ, հաշվապահություն հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0 :

Հանձնաժողովի
նախագահ՝ _____ Արթուր Կոստանդյան

անդամներ՝ _____ Իվան Խաչատրյան

_____ Գրիգորի Սահակյան

_____ Զարուհի Հարությունյան

_____ Հերմինե Մովսիսյան

քարտուղար՝ _____ Ժաննա Մղումյան